ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԾՁԲ 25/15» ծածկագրով **«ամանորյա տոնական ձևավորման ծառայության»** ձեռքբերման գնման ընթացակարգի

«Հրավերի վերաբերյալ պարզաբանում տրամադրելու նիստի»

«04» դեկտեմբերի 2025 թ.

ք. Էջմիածին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Վաղարշապատ համայնքի ղեկավարի օգնական՝ Ռ. Զիրոյան

Հանձնաժողովի անդամներ՝
Վաղարշապատ համայնքի ղեկավարի օգնական՝ Մ. Մելիքյան

Վաղարշապատ համայնքի ղեկավարի խորհրդական՝ Բ. Նիկողոսյան

Վաղարշապատի համայնքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» ԲՀ-ի տնօրենի տեղակալ՝ Ա. Սիմոնյան

Վաղարշապատի համայնքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» ԲՀ-ի գլխավոր հաշվապահ՝ Ս. Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար
Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ՝ Խ. Զազյան

1. Հրավերի վերաբերյալ պարզաբանում տալու մասին

1.1 **«ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԾՁԲ 25/15»** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ 03.12.2025 թ. ստացվել է հետևյալ հարցադրումը.

Հարցադրում 1

Հարգելի՛ պատվիրատու, ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԾՁԲ 25/15 ծածկագրով մրցույթի «2.6» կետում նշված է, որ անհրաժեշտ է ներկայացնել «Վերջին 3 տարվա ընթացքում իրականացրած 3 նմանատիպ պայմանագրի և հանձնման - ընդունման արձանագրության պատճեն»: Խնդրում ենք պարզաբանել ինչ նկատի ունեք նմանատիպ պայմանագիր նշելով:

1.2 **«ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԾՁԲ 25/15»** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ 03.12.2025 թ. ստացված հարցադրմանը տրամադրել պարզաբանում հետևյալ բովանդակությամբ.

Պարզաբանում 1

Հարգելի՛ մասնակից, ի պատասխան Ձեր հարցմանը, հայտնում ենք, որ ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԾՁԲ 25/15 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասով սահմանվում է մասնակցի կողմից հայտով ներկայացվող փաստաթղթերի ցանկը, որի 2.6 կետով պահանջվում է նաև վերջին 3 տարվա ընթացքում իրականացրած 3 նմանատիպ պայմանագրի և հանձնման - ընդունման արձանագրության պատճեն:

Տվյալ կետով Պատվիրատուն նկատի ունի տեսնելու վերջին 3 տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացված ամանորյա տոնական ձևավորման ծառայության առնվազն 3 պայմանագիր, որը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատուցված ծառայության ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակներում հաստատված գնման գնից:

Ընդ որում նշված պայմանագրի առարկան և ըստ այդմ մասնակցի ստանձնած պայմանագրային պարտավորությունները նույնպես պետք է վերաբերեն ամանորյա տոնական ձևավորման ծառայության մատուցմանը:

Ընդունվում է որոշում՝ 5 կողմ, 0 դեմ:

2. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի նախագահ՝
Վաղարշապատ համայնքի ղեկավարի օգնական՝ Ռ. Զիրոյան

Հանձնաժողովի անդամներ՝
Վաղարշապատ համայնքի ղեկավարի օգնական՝ Մ. Մելիքյան

Վաղարշապատ համայնքի ղեկավարի խորհրդական՝ Բ. Նիկողոսյան

Վաղարշապատի համայնքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» ԲՀ-ի տնօրենի տեղակալ՝ Ա. Սիմոնյան

Վաղարշապատի համայնքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» ԲՀ-ի գլխավոր հաշվապահ՝ Ս. Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար
Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ՝ Խ. Զազյան